

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

29 օգոստոսի 2006 թվականի N 11-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԵՎ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍԱԿՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵՍԵՐ
ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
14-րդ հոդվածի 7-րդ մասով եւ 19-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ պարբերությամբ՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

Հաստատել համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ եւ
համայնքային ծառայողների ատեստավորում անցկացնելու համար թեստեր կազմելու կարգը՝
համաձայն հավելվածի:

ԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ՋԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ
ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵՍԵՐ
ԿԱԶՄԵԼՈՒ

1. Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և համայնքային ծառայողների ատեստավորում անցկացնելու համար թեստերը կազմվում են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ օրենք) և սույն կարգին համապատասխան:

2. Հարցաշարերը կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմը:

3. Հարցաշարերը, ըստ բնագավառների, բաղկացած են հարցերից (խնդիրներից): Հարցերը պարունակում են համապատասխան բնագավառների վերաբերյալ կոնկրետ հարցադրումներ, իսկ խնդիրները՝ կոնկրետ իրավիճակների նկարագրություններ:

4. Համայնքային ծառայության յուրաքանչյուր պաշտոնի համար հարցաշարերն ընդգրկում են՝
ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի (ատեստավորման) դեպքում՝ առնվազն 120 հարց (խնդիր).

բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի (ատեստավորման) դեպքում՝ առնվազն 90 հարց (խնդիր).

գ) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի (ատեստավորման) դեպքում՝ առնվազն 60 հարց (խնդիր):

5. Հարցաշարերի հարցերը (խնդիրները) ընդգրկում են հետևյալ բնագավառները՝

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ 10 տոկոս.

բ) համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրություն՝ 20 տոկոս.

գ) տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրություն՝ 70 տոկոս:

6. Մրցույթը կամ ատեստավորումն անցկացվելուց առնվազն մեկ ամիս առաջ հարցաշարերն իրենց միանշանակ ճիշտ պատասխաններով հրապարակվում են (դրանք կարող են փակցվել ***քաղաքապետարանում (գյուղապետարանում)*** տեսանելի տեղում):

7. Հարցաշարերից հարցերի (խնդիրների) ընտրությունը կատարվում է համակարգչի միջոցով:

8. Հարցերը (խնդիրները) կողավորվում, համարակալվում են ըստ բնագավառների և ըստ պաշտոնների խմբերի: ***Քաղաքապետարանի (գյուղապետարանի) աշխատակազմը*** հարցաշարերը զետեղում է համակարգչում:

9. Համակարգչում առանձին գետեղվում են նաև կողավորված և համարակալված հարցերի (խնդիրների) 3 կամ 4 ենթադրյալ պատասխան, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է:

10. Համակարգչային ծրագրի միջոցով թեստերը կազմվում են համակարգչում նախօրոք գետեղված հարցաչարերի կողավորված հարցերից (խնդիրներից)՝ պատահական ընտրությամբ: Համակարգչային ծրագիրը, ընտրելով հարցը (խնդիրը), միաժամանակ դուրս է բերում վերջինիս ենթադրյալ պատասխանները և միասնականացնում:

11. Թեստերում ընդգրկվում են հետևյալ չափաբաժիններով հարցեր (խնդիրներ)՝

ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի (ատեստավորման) դեպքում՝ 40 հարց (խնդիր).

բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի (ատեստավորման) դեպքում՝ 30 հարց (խնդիր).

գ) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի (ատեստավորման) դեպքում՝ 20 հարց (խնդիր):

Թեստերում ընդգրկվում են սույն կարգի 5-րդ կետում նշված տոկոսային հարաբերակցությամբ բնագավառների հարցեր (խնդիրներ):

12. Սույն կարգի 10-րդ կետով նախատեսված կարգով կազմված թեստերի հետ միաժամանակ համակարգչի միջոցով դուրս է բերվում թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշը և անմիջապես գետեղվում կնքված արկղի մեջ:

13. Հանձնաժողովը թեստերը կազմում է մինչև թեստավորման փուլն սկսելը:

14. Յուրաքանչյուր մրցույթի կամ ատեստավորման դեպքում մասնակիցների համար կազմվում է մեկ ընդհանուր թեստ:

15. Թեստավորման առաջադրանքները մասնակցին կամ համայնքային ծառայողին կարող են առաջարկվել գրավոր կամ համակարգչի միջոցով: